



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9859

Загибанинъ

304 - Рентген



Миха  
1921

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐ, ԹԻՖ 26

31625-42

Հ. Ա. Հ. Ա. Հ. Ա. Հ. Ա. Հ. Ա. Հ.


# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՕՆ-ՔԻԶօԹԸ

(Գ. ԲԱԿԱՆ-ԵՐԵՎԱՆԻ ԱԿԱԴ. Պ. Լ. Պ.)

«Մեր շուտախոս ցեղի մէջ կան անհատներ, որոնք  
առանց դիմադրութիւն կ'ընդունին մահապատճի չար-  
չարանքը, եթէ տանց թող տրուեր կառագիւատի  
բարձունքն ու ճուռն ծովախօսութիւն մը պատասխու-  
թանց երկիրը թէ, Առնթեսի թժուելները անման-  
նակ կ'երազվ պիտի ընդհանուն լիրնց ճարատիրա-  
նութիւնը»

ՇԱԽԻ. ՊՕՏԼ. Հ. Պ.

2003



Ակն

Ա.

## ԿԸ ԾՆԻ ՄԱՆՈՒԿԸ

Մանուկի ծնունդը չանցաւ աննշան, թէիւ առասպելներ, զբացներ կապուած իր ծագումին շուրջը նախօրօք։ Մայրը ծննդաբերութենէ եօթը ժամ առաջ ցւեր զգաց, զբացիներէն մօտիկները կանչուեցան, ժողովրդական գայել մը բերին զիշերը ժամը 11ին և... ծնեցաւ մանուկը՝ Խարբերդի Զմշկածագ առանին ամենաապուժուա տանը՝ ներքնայարկին մէջ։ Մանուկը իր հշանաւոր կեանքի առաջին բուգէին խոկ զայրացաւ և գայելի զրկին մէջ, աղուած ժամանակ՝ ուղիմական ձիւեր արձակեց։ Դայելը, որ աւանին և շրջակայ գիւղերու հարիւրին առնուազն եօթանասուն մանուկները առած էր, այդպիսի բանի չէր հանդիպած և իր զարմանքը յայտնեց մանուկի մասին։

Հաս հայկական քրիստոնէական սովորութեան, ծնունդին ութը օր յետոյ մկրտեցին և անուանակոչնեցին նոր մանուկ՝ Տիրատուք։

— Զալըմ աղայ է, եամա՞ն, կըսէր գայելը, մնձնայ նէ թու սկիսի ըլլայ։

Տիրատուքը չէր լար, այլ կը զայրանար և կը ձէր իր զոյութիւնը զգացնելով ոչ թէ առնը բոլոր անդամներուն և անկիւններուն, այլ զրացի բոլոր առներուն։ Իր ծնունդի զիշերը միշտակաթեան արժանի մէկ բան պատահեցաւ, որուն մասին տակատին քանի տարիներ թէ իր ծնողները. մեծ եղբայրները և քոյքերը և թէ բոլոր զրացիները՝ խոսեցան։ Իր ծնունդի զիշերը բոլոր թաղի աքրոները կանչեցին բոյներուն մէջ մինչեւ առաւօտ։ Նոյն խոկ շատերը կէս զիշերէն յետ նոսեցան իրենց հակագններուն մէջ, խաչ հանեցին և մրթմրթացին քթերնուն տակ։

— Օր մը օրանց խորոգները այսպէս չէին կանչած, ի՞նչ  
է պատահեր:

Ծնած էր Տիրատուրը:

Բայց յաջորդ առաւօտ Տիրատուրի դայեկը անդրադառ-  
սալով աքրոներու արտակարգ կանչին՝ ըստ:

— Յակորին նոր ծնած երախան զալբժ տղայ պիտ ըլ-  
լայ, հայիսները կրնան զիտնալ, տառը համար կը կանչին:

Եւ որովհետեւ դայեկը ճանչցուած էր աւանին մէջ իրրեւ  
ամենին փորձառու պառաւ և երբեմն ալ վայ բացոյ կի՞ն  
բոլորն ալ հաւատացին անոր և իրարու հաւատացուցին: Այս  
եղաւ փոքրիկն Տիրատուրի կեանքին առաջին զրոյցը, և  
այնքա՞ն խօսուեցաւ, որ իր զիտակից ըլլալին յետոյ՝ ինք  
անձամբ լսեց այդ պատմութիւնը և սպանեց իր մտքին մէջ,  
երջանկօրէն և հավարտօրէն մտարերելով յանախ այդ զրոյցը՝  
զարգարելով և խոշորյնելով դէպքը իր թաքուն պատմու-  
թեանը մէջ:

Երբ քանի մը օր յետոյ, կէս զիշերին՝ մայրիկը առաւ իր  
զրին մէջ ծիծ տալու, միացաւ դայեկի կարծիքին, որով-  
հետեւ իր մանուկներին և ոչ մին այդպիսի խոժոռ նայ-  
ուածքներ ունէր և այդպիսի գառող ձիչ: Իր մեծ քոյլերը,  
որոնք անհունօրէն ոգեւորուած էին նոր մանուկով, նոյն զի-  
մողութիւնը լրին: Հայրը միւս իրիկունք մօսենալով իր կնոջ  
անկողնին, նստեցաւ ուռքերուն քոյլիկը, բռնեց անոր ձեռքը  
և ըստ:

— Այս նոր տղանիս ուրիշ բան է, հէջ մէկուն չի նմա-  
նիր:

— Զէ, յարեց տղացկանը, մայրական կեզծ բայց ոի-  
րելի համեստութեամբ, Տիրանո ալ այդպէս էր, բայց յետոյ  
համդարտեցաւ, ակնարկելով իր անդրանիկ դաւակին:

Հայրը չի համոզուեցաւ.

— Տիրանը ո՛ւր է, աս ո՛ւր է, դայեկին ըստածին պէս,  
զալբժ տղայ է:

Մորը աչքերուն մէջ յայտնապէս երեւացին երջանկու-

թեան լայն ցոլքեր: Գլուխը սիրամարդի պէս դարձուց գէպի  
իր մեծ աղջիկը և նշան ըրաւ որ Տիրատուրը իրեն տայ: Տի-  
րատուրը, սեղմօրին փաթթուած շորերու մէջ, բայց միշտ  
անհանգիստ և աչքերը բաց, զրկուեցաւ և տարուեցաւ մայ-  
րիկին մօտ: Մայրիկը թեւերը երկարեց, զորովագին գրկեց  
էր արտակարգ երախան, գուրս հանեց իր լեզվեցուն ստինքը  
և յանձնեց Տիրատուրին: Հայրը ծռեցաւ և երեխան համրու-  
րել ձեւացնելով՝ համրութեց կարոտագին կերպով Տիրատուրի  
մօր ձիւը, որ ատեն մեծ աղջիկը՝ հեռացած էր և Տիրատուրը  
մինակ էր իր ծնողներու սիրացին հեղեղատին միջեւ:

Ութը օր յետոյ երբ սուբբ աւազան տարին՝ Տէր Հայրն  
ալ Տիրատուրի արտակարգ երեխաց ըլլալու մասին կարծի՛  
յայտնեց և երբ մկրտութիւնէ յետոյ տուն եկաւ և աղօթք  
կարդաց աղացկան մօր վրայ, աւելցուց «որ ծռաւ մանուկ  
մեծ և սքանչելի»:

• • •

Բ.

## Խ'ԵԶՔԵՍ ՑԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱԿ ՊՈԼԵՊՈՆԵԱՆ ՑՈՒՆՐ

Տիրատուրի նախ քան ծխական վարժարան մտնելը՝ աւա-  
նին մէջ ծանօթ էր իրեւ զարմանալի մանուկ մը: Հայրը,  
որ քիչ շատ զրող-կարգացող մարդ էր և կը հասկեար նաեւ  
երրոպական պատմութիւնէ՝ իր Տիրատուրի մասին օր մը խօ-  
սած ատեն՝ կոչած էր դայն փոքրիկ Պուռապօն: Այս նոր ան-  
ուածնակոչութիւնը ու և է անմիջական կապակցութիւն չունէր  
իր զաւակի բնաւորութեան հետ իր հօր մտքին մէջ: Հայրը  
կարգացեր էր Ալէքսանդր Տիրացի վէպերը և ծանօթ էր  
փրանսական միապետութեան Պուռապօնեան արքայական տան  
և յատկապէս իր ուշադրութիւնը զրաւած էր կուգովիկոս

ԺԴ. բգը, նշանաւոր կուի Քաթորզը: Երբ մէկ քանիներ համաձայնեցան Տիրատուրի արտակարգ մանուկ մը ըլլալուն՝ անիկա օր մը կոչեց Տ'րատուրը՝ Պուռպօն, և այդպէս ալ մնաց մինչեւ վերջը:

Հայրը այդ օրին սկսեալ յամսորէն Տիրատուրը կոչեց փոքրիկ Պուռպօն և տանը միւս անդամները և դրացիները, առանց հասկնալու բառին պատմական և ծանր նշանակութիւնը՝ հետեւեցան Յակու աղային, կոչելով Տիրատուրը՝ Պուռպօն, սրոնց գեռ ևս հետեւեցաւ հետզհեաէ ամրող աւանը: Ահա թէ ինչովէս ֆրանսական մհծ յեղափոխութեամբ, արիւնանեղ կոփւներով վերջացած ամենանդօր արքայական ընտանիքներէն մէկը՝ զարձեալ կը յառնէր Հայաստանի ամենանաւու և յետ ինկած աւանի մը մէջ՝ յանձին փոքրիկն Տիրատուրի:

Այս թուականէն ի վեր Տիրատուրը կոչուեցաւ փոքրիկ Պուռպօն: Ատենէ մը յետոյ միայն տան անդամները և թերեւս ընտանիքի չառ մօտիկ բարեկամները զիտէին անոր խսկական, քրիստոնէական անունը:

Պուռպօնը երբ արդէն 7-8 տարեկան էր, հետամուտ եղած էր իր հօրմէն հասկնալու իր անուան նշանակութիւնը: Հայրը, որ չսփազանց կարեւորութիւն կուտար իր արտակարգ զաւակին՝ մանրամանորէն սկսած էր պատմել կուգովիկոս ԺԴ. ի պատմութիւնը: Փոքրիկ Պուռպօնի մատաղ իմացականութեան վրայ խորապէս զրոշմուած էր կուի ԺԴ. ի «Պետութիւնը ևս եմ» խոռը: Այս խոռը ամէնէն հարազատ արտայայտութիւնն էր փոքրիկ Պուռպօնի ընաւորութեան, կոկողավիզութեան, անոր ամրող խառնուածքին հետ: Անիկա հինգ տարեկանէն խոկ սկսաւ յայտարարել տանը մէջ. «Ես եմ»:

Իր ծնողները, երջանիկ՝ փոքրիկ Պուռպօնի յոխորասնքներուն, «ԴՈՒՆ ԵՍ» ըսին և ամէն մարդ հաւատաց, որ ասիկա է»:

Ծխական դպրոցի մէջ խաղի ժամանակ ինքն էր, որ իր

համար կը հրամայէր, «Ես պիտի ըլլամ ձեր առաջնորդը»: «Բերդ» խաղած ժամանակ փոքրիկ Պուռպօնն էր, որ առանց իր ընկերներուն հաւանութիւնը առնելու՝ կը ցատքէր, կ'եւ լեր գարակոյախն զագաթը և կը հրամայէր միւսներուն.

— Եղթայ կազմեցէք, ուշադրութիւն, բերդը մանողներ կան, գուն դուրս ե՛լ, երկու հոգի նե՛րս, հինգ հոգի զո՛ւրս: Իր ընկերները առանց զիտակցելու, որ անիկա խնդրակոչորէն ընտրուած էր խաղի դեկագար՝ կը հնագանգէին: Եթէ պատահէր մէկը, որ խմլիր յարուցանէր անոր զեկավարութեան շուրջը, փոքրիկ Պուռպօնը արհամարհանքով կը նայէր ըմբռուախն վրայ և կը հրամայէր միւսներուն ծեծել զայն և խաղի հանդիպէն զրկել, և այսպէս ալ կ'ըլլար:

Օր մը փողոցին մէջ հանդիպեցաւ իր ընկերներուն մէկ քանիին:

— Եկէք իմ ետեւէս, աղաղակից յանկարծ, զլուխը վեր բռնած և խատ հրամայողական եղանակով: Բոլորը հնազանցեցան: Պատցուց զանոնք մէկ քամնի փողոցներ, հաւաքելով բոլոր անցած փողոցներու շուները: Մեր գաւառի մէջ փողցի շուները այնքան սերտ բարեկամութեան մէջ են մանուկներու և առ հասարակ ազգարնակչութեան հետ, որ մամակից են փողցի բոլոր երեւոյթներուն: Ընարական պայքար մը այնքան ողեւորիչ էր քաղաքացիներուն, որքան շուներուն համար: Իր ետեւէն գացողները աւելի շացան, հետզհեաէ զարձաւ փոքրիկ ամրոխ մը, թափորի պէս չըջն կազմելով, փոքրիկ Պուռպօնը միշտ առջեւէն, մինակ և զլուխը սիրամարզի պէս հպարտ: Նոյն խոկ փողոցի անկարգապահ շուները իրմէ առաջ չքալեցին՝ յառելով Պուռպօնն և պոչերնին երեցնելով պաղաստավին և պատրաստակամ: Ազմուկ, կանչուըրատուքներ, պատուհաններէ զլուխներ ցցուեցան գորս, տանիքներու քիւերուն վրայ մարզիկ հաւաքուցանիքները, ուրիշ փողոցներէ և թաղերէ մարդոց հոսանք մը եկաւ տեսնելու իրարանցումը: Բոլորն ալ կը սկսէին.

— Դարձեալ Պուռպօնն է, զարմանալի մանուկ է, եղաքը, մեծ մարդ պիտի ըլլայ:

Փոքրիկ Պուռապօնը ասպետականօրէն չլսելու կը զարներ :

Ուրախութիւնը, հպարտ երջանկութիւնը անչափ էր իր ծնողներուն մօտ, մանաւանդ էր քոյլերը խելայեղուած՝ կը դիտէին տեսարանը: Պուռապօնի մեծ եղայրներն անգամ մտան իր առաջնորդած թափօրի կարգավահութեան մէջ :

Երբ Պուռապօնը թափօրը հասցուց մինչեւ իրենց տան մեծ գուռը, յետ զարձաւ, աշ ձեռքը բարձրացուց վեր, թափօրը կանդնեցնելու մտազութեամբ: Երբ թափօրը կանդնեցաւ տիրեց լուսութիւն: Պուռապօն՝ կուրծքը ցցած, աշ ձեռքը հրամայականօրէն բարձր բռնած պոսաց.

— Յըռուեցէ՞ք :

Ժխոր, աղմուկ: Ամբոխին մէջ նոյնիսկ կը նշմարուէին տարիքոտ մարդիկ :

Փոքրիկ Պուռապօնը ներս մտաւ, քոյլերը հաւաքուեցան իր շուրջը, մէկը գրկեց միւսին տուաւ: Պուռապօնը խօսելով թափօրի մասին ըստ:

— Ե՞ս կազմեցի այդ ցոյցը :

Մանկապարտէզի և յետոյ ծխական վարժարանի մանուկներու մէջ ծագած բոլոր վէճերը կը լուծուէին փոքրիկ Պուռապօնի նեղինականոր խօսքերովը:

Երբ շուկային կ'անցներ, առանց դուռներու առջեւ կանգ առնելու, նեծանիրի պէս արագ, խանոսթպանները իրարու կը դառնային և մատով Պուռապօնը ցտցնելով կ'ըսէին.

— Պուռապօնը կ'անցնի:

Պուռապօնը առանց լսել ձևացնելու, թեւերը աւելի աւրագ կը փարուէր, քիչ մը աւելի կ'արագացնէր իր քայլերը և կ'անցնէր, կը սուրա՛ր:

Օր մը երբ ճամբան մէկը անզգուշութեամբ իրեն զարնուեցաւ, կեցաւ անիկա, ոտքէն մինչեւ գլուխը լաւ մը դիտեց և հայհոյանքի պէս բան մը մրիթմրթալով՝ անցաւ:

Շատեր երբ կը տեսնէին զայն փողոցին մէջ քալած ատեն, անգամ մըն ալ ետեւնին կը դառնային և կը դիտէին զինքը: Պուռապօնը կը տեսնէր, կը զգար, բայց անզգայ կը ձեւացնէր ինքզինք՝ հոգին լի արախութեամբ:

Պուռապօնը տակաւին տասը տարնկան էր:

Գ.

## ՊՈՒՌ-ԹՈՆԸ ԿԸ ԲԱԺՆՈՒԻ ԻՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՏՈՒՆԷՆ

Փոքրիկ Պուռապօնը շուտով թողուց իր ծննդավայրը և մեծ, ահաւար յոյսերով դրկուեցաւ Խարրերդ՝ Եփաստ գողէձը, իրեւ գիշերօթիկ աշակերտ: Հայաստանի այդ կողմերը, ինչպէս այժմ, այն ատեն ալ կանոնաւոր շօսներ չկային և գաւառի զանազան գիւղերէ և քաղաքներէ կերպուն գալու համար՝ պէտք էր տաժանելի և երկար ճամբորգութիւն մը ընել ձիերու, էշերու և ջորիներու վրայ նստած: Պուռապօնի ճամբորգութիւնը, այն ատեն 13 տարեկան, որոշուած օրէն օր մը ուշացաւ, որովհետեւ խոեղ հայրը առանց կանխամտածելու փոքրիկն Պուռապօնի ասպետական ողիի համապատասխան կարգագրութեան մասին, աժան ըլլալու համար, երկու հատ խոշոր էշ էր վարձած, մէկը իր համար նստելու և միւսը իր իրեղիններուն: Պուռապօնը ոտքը մէկ աման զրաւ, և մերժեց իշու վրայ նստիլ:

— Զի՞ կ'ուղիմ, զեղեցիկ ձի կ'ուղիմ, և ասպետի մը անվայիլ կերպով՝ լացաւ:

Քոյլերը միացան իրենց գոսող և իրաւացիօրէն բողոքող եղբօր հետ և պահանջեցին անպայման երկու մնագոյն ձիեր վարձել: Մայրը՝ ուրախութիւնին կը ժպտէր և կը գրկէր փոքրիկ Պուռապօնը՝ բայլով.

— Մի լար, աննմա՞ն եավրուս, քեզի համար ձիեր կը վարձենք, երկու միազդին նժոյզներ, անպայման, անպայման, մի՞ լար:

Պուռապօնը աչքերը սրբեց, ամօթէն չնայեցաւ ուրիշներու երեսը և սպասեց հօրը վերադարձին:

Հայրը հրաժարեցաւ իշապանին վճարած կանխավճարէն և վարձեց երկու ձիեր, ոչ միազդին, առարկելով և պաղա-

տագին ինողրելով, որ ձիապանները միադոյն ձիեր չունեին։ Պուռազօնը, թէեւ չամոզուեցաւ հօրն այդ ստափոսութեան, բայց համակերպեցաւ, պայմանով՝ որ ինք պիտի հեծնէր կարմիր ձին և թամրի վրայ, իսկ միւսին պիտի բնոցնէին իրեղինները։

Իրեղինները բեռցուցած ատեն Պուռազօնը նշմարեց, որ իր փայտէ սուրբ չի կար։ Պուռազօնը ապրերութիւնը շատ լաւ դիտէր փայտին և պողպատին մըջեւ, բայց կարեւ օրութիւն չէր տար, որովհետեւ անհրաժեշտը իր համար ձեւն էր, — երկար և կոր, վրան թիթիղէ աստղիկներով զարդարուած։ Հրամացեց իր մեծ քրոջ անմիջապէս գանել իր սուրբ և բնուրել։ Քոյրը անմիջապէս բերաւ։ Զիապանը ծիծաղելով և երախային հետ կատակելով՝ առաւ զայն և կախուց Պուռազօնի վրայ։ Պուռազօնը չհասկցաւ ձիապանի հոգերանութիւնը։

— Զիապան մը չկրնար կատակել ինծի հետ, մտածեց անիկա։

Բոլորը համբուրելէ և բոլորէն համբուրուելէ յետոյ՝ գնաց և կանգնեցաւ ձիուն քով, առանց երեւցնելու որ չէր կրնար վրան նսախի։ Հայրը զրկեց և նսակցուց։ Պուռազօնը երկարեցաւ և բնուց ձիուն բաշը, իսկ երասանը մնաց ձիապանի ձեռքքը։

— Կեցէ՞ք բարով, աղաղակեց Պուռազօնը զլուխը ցցած և աչքերը յառած կապոյտ երկնախին։

Շանհատարհին ձիապանը նշմարեց, քանի մը անզաններ, որ փարբիկ Պուռազօնը ձիուն վրայ նստած ատեն, տարուած իր մանկական երազներով՝ կը քաշէ սուրբ և տեսուկ մը հրաման տալու նշաններ կը ընէ և փայտէ սուրբ մէկ քանի անգամներ սպասնազին կերպով պատուքեցնելէ յետոյ օդին մէջ, կը գնէ գարձեալ պատեանը։ Զիապանը, ի հարկէ, չէր զիտակցէր, որ իր կարմիր ձիուն վրայ նստած իր Հայոց ապագայ խոշորագոյն ստեղծագործողը։

Երբ հասան իսարերդ՝ ձիապանը, ըստ իր ստացած պատշէրին, տարաւ փոքրիկ Պուռազօնը Ամերիկեան նիքատ Գօ-

լէցր և իր իրեղիններով միասին՝ յանձնեց զիշերօթիկ յարկաւրամնի զլիաւորին, որ բնուրունեց փոքրիկ և սիրուն նորեկն սիրուլիք ժպիտով։ Անմիջապէս արդազրեց անոր համար 10-15 տարեկան աշակերտներու ննջարանը մահճակալ զնել։ Ծառան երբ շալկեց իրեղինները և վեր տարաւ։ Պուռազօնը հետեւեցաւ անոր իր սուրբ վրան կախած։ Աշակերտները բակին մէջ զարմանքով և հետաքրքրութեամբ դիտեցին այդ փոքրիկ տղան, իր սուրբ և զլուխին բռնած ձեւը, աքլորի պէս հպարտ և առնական։

Եր իր ննջարանը տեղաւորուեցաւ՝ կէտի մը վրայ կանգնած՝ զարձաւ ինքնը իր առանցքին վրայ և արհամարհանքով սկսաւ զիտել շուրջը։

Մէկ քանի փոքրիկներ մօտեցան իրեն և ուղեցին տեսնել սուրբ։ Պուռազօնը քմթիծաղով և մեծի մը երեւոյթով տուաւ։ Մէկը ուղեց քաշել, բայց չչաջողեցաւ։ Պուռազօնը առաւ ձեռքէն, քաշեց սուրբ պատեանէն, բարձրացուց վեր և պոռաց։

— Պա՛տրա՛ստ, օ՛ն . . .

Պտտիկ աշակերտները նախանձեցան ի սրտէ այս նորեկի ալդքան վարժ սուսերախսաղի վրայ։

Իրիկուան Պուռազօնը կանչուեցաւ, զլիաւորի սեննակը։ Գացած ատեն իր մահճին քով ննջալ ընկերը, որ աղեւս բաւականին մակրմացած էր նորեկի հետ և նոյն իսկ անոնը զիտէր՝ զգաւշացուց անոր, սուրբ վար առնել ուսէն և ասզա երթալ զլիաւորին մօա, բայց Պուռազօնը արհամարհական և խիստ նայուածքով մը «ոչ» պատասխանեց և գնաց . . . սուրով։ Փոքրիկ մանուկը շատ զարմացաւ այդ զգուշաւորութեան վրայ, որովհետեւ իր մտքին մէջ միայն մէկ մատանում ունէր և իր ծննդապարբէն մինչեւ վարժարան գալը այդ մտածումը մանկօրին և չերմապին գործանքով փայխայած էր։ Անիկա կրնար լալ, արտասուք թափել և ստվակել վարժարանի իշխանութեան՝ դրկել զինք յետ, դէպի իր հօր տունը, եթէ անիկա համոզում զոյացնէր վայրկեան մը որ

առիթը չպիտի ունենար ցուցնելու իր սուրը վարժարանի զինաւորին :

Գլխաւորը ապշութեամբ և երջանկօրէն նայեցաւ նորեկ աշակերտի վրայ, գիտեց ոտքէն մինչեւ զուխը .

— Այդ ի՞նչ բան է, հարցուց զինաւորը, ցուցնելով անոր ուսէն կախուած սուրը :

— Իմ սուրս է, ես սուր ունիմ, պատասխանեց Պուռագոնը :

— Բայց գպրոցին մէջ այլեւս չսփախ պատցունես, յարեց զինաւորը, այդպիսի բաներ վնասակար են և հակառակ բարի և քրիստոնեայ մանուկի մը ոգիին :

Պուռագոնը ոչինչ հասկցաւ «Վնասակար է քրիստոնեայ ոգիին» բացարարութենէն :

«Ինչպէ՞ս վնասակար է, ես կը սիրեմ սուրը» կը մտածէր Փոքրիկ Պուռագոնը և զլուխը ծռած՝ կը զիտէր իր մէջքէն կախուած թիթեղէ աստղիկներով զարդարուած գործիքը : Պուռագոնը չպատասխանեց :

«Ես քովս կրնամ պահել» մտածեց անիկա :

— Ինչպէս է անունդ, հարցուց զինաւորը :

— Պուռագո՞ն... պատասխանեց, թառ և ծանր շեշտերով :

— Պուռագո՞ն :

— Այս, Պուռագո՞ն :

Գլխաւորը ոտքէն մինչեւ զլուխը զարձեալ զննողական ակնարկ մը պատցուց այդ անունի արտասանութենէն յետոյ : Պուռագոնը շատ լուրջ ընդունեց նայուածքը, որովհետեւ անիկա մեծ հաւատք ունէր իր անուան պատմականութեան մասին : Իր սուրէն առաջնագոյնը և կարեւորագոյնը իր անունն էր :

— Պուռագոն, ԵՍ ԵՄ, կը կրկնէր անդադար իր մտքին մէջ և այս յանկերպ այնքան սովորական զարձաւ մատաղ հոգիին համար, որ յաճախ մինենոյն յանկերպը բարձրածայն կը կրկնէր իր ընկերներու և ուրիշներու ներկայութեան,

բայց առանց անգրադառնալու այդ յանկերպի բարձրածայնութեան : Փոքրիկ Պուռագոնի մտքերն իր համար հեղինակութիւններ էին և իր համազումով այնքան անյաղթելի, որ երբէք չէր կրնար խորհիլ թէ ուրիշներու ծաղրանքի առարկայի կայ կրնացին դառնալ :

Պուռագոնը շատառվ եղաւ աչքի ընկնող Փոքրիկ աշակերտը վարժարանին, ոչ թէ իր գասարանին մէջ, յառաջդիմական ընդունակութիւններ ցոյց տալուն համար, այլ իբրեւ կովալալիղ տպայ և իբրեւ ճարտասան : Եփրատ գոլէճի մէջ կար սովորութիւնն, որ նախակրթարանին մէջ աշակերտին գոյց սովորեցնել կուտային գեղեցիկ գրական արտասանների կաոր մը և շարաթ օրը աշակերտը կ'արտասանէր զայն ցուցուններով իր առողջանութեան և ճարտասանութեան բնական ձիբքերը : Պուռագոնը առաջինը հանդիսացաւ ճարտասանութեան մէջ՝ իբր ընատուր ատղանդ : Իր ուսուցիչները զինքը սկսան կոչել պղտիկ պերճախօս : Երբեմն կը պատահէր, որ Պուռագոնը մոռնար բուն հեղինակին խօսքերը, բայց անիկա բառ մը, շատ խոշոր և իր խելապատակին մէջ չպարփակուող բառ մը՝ կ'աւելցնէր, շարժելով հեղինակը հասկցողներու ծիծաղը և չհասկցողներուն հիացումը : Պուռագոնը ինք առաջինն էր, որ կը հիանար իր վրայ և կը թուլաշնէր ուրիշներու հիացման զգացումը : Եղինակ առիթ չէր տպր ուրիշներու՝ հիացման արտայատութիւններ ընկելու :

Կ'երթար ճարտասանութեան ուսուցչին մօտ և ժամերով կը խնդրէր՝ ամէն շաբաթ օր զինք բեմ բարձրացնելու համար, մինչեւ ուրիշներ խոյս կուտային : Կը պաղաէր Պուռագոնը իր համար ընտրել անպայման ազգմաշունչ ուսանաւոր մը : Օր մը Պուռագոնի բաժին ինկաւ արտասանել վիքթոր շիւկոյի մէկ նշանաւոր ճառը՝ ուր ի միջի այլոց, կ'ըսէ՝ «Մարմէլլ, սուրք հանէ՛ քու զաւակներդ և գո՛ւ, Տիմո՛ն, բարձրացուր սուրդ» : Պուռագոնը զիւերներավ երազեց հնար գտնել սուր կախելու և «Տիմո՛ն, բարձրացուր սուրդ» արտասանած ատեն՝ քաշել սուրը : Ճօնելով օղին մէջ, աշա-

կերտներու գլխուն վրայ սպառնագին և... ծափեր խլել, բայց արդէն երկու տարուան աշակերտ էր և զիտէր, որ անընդիմ էր այդ տեսակ բան ընկը: Միեւնոյն ատեն անիկա չփաղրեցաւ երազել և իր նաջարանի ընկերներէն շատերը իմացան թէ ան ինչպէս քունին մէջ վեր վեր կը ցատկէր և բառեր կ'արտասանէր իր շարաթ օրուան ճառէն:

Դ.

## Պ Ղ Պ Զ Ա Կ Ն Ե Ր

Պուռազնը բարձրացաւ Գոլէճի դասընթացքը երբ տակաւին տասնեւվեց տարեկան էր: Անիկա ճարտասանութեան մէջ ցուցուց արտակարդ կարտողութիւն, չտեսնուած տաղանդ մը Գոլէճի երկար տարեկորութեան մէջ: Շնորհիւ իր ճարտասանական բնատուր տաղանդին, անիկա երեւութական կարողութիւն ցոյց տուաւ նաեւ իգուներու մէջ, իսկ մնացեալ բոլոր դասերը կ'անցնէր ու չեր անցներ:

Պուռազնի մէջ տեղի ունեցաւ երազներու հիմնական փոփոխութիւնները: Մուցաւ սուրբ, յաղթութիւնները, բայց սակա չմոռցաւ երբեք իր ասպետական ձեւերը: Իր հոգին, ընդունակ ամենաբոցավառ երեւակայութեանց, սարսափելի երազներու, սկսաւ տանջուիլ տիտղոսներու համար: Դժբաղդաբար միտքը օգնութեան չեր համներ Պուռազնի հոգեկան թորհքներուն: Անիկա երկար ատեն հարց կուտար ինքզինքին և չեր կրնար հաստատուն, վերջնական եզրակացութեան մը զալ: Կը մտածէր անիկա՝ ի՞նչ կոչուիր. Տօքթէօր թէ Բրոֆէօր: Օրուան դասերը լրանալէ յիտպ, առանց մտածելու վաղուան դասի պատրաստութեան, երկար և առանձին

պատոյտներ կ'ընէր Գոլէճի երկար պատոյտի ճամբուն վրայ և անդուլ և անդադար կը մտածէր.— Տօքթէօր թէ բրօֆէսէօր: Շատ անգամներ ուսուցիչներ և ուսանողներ կը տեսնէին դինքը մօտէն թէ հեռուէն, որ աչքին կապոյտ տօնու մը անցուցած, մազերու գանգուրները սանտրած ջրով, որ արեւուն տակ կը փայլէր, ընդունելու և մերժելու շարժումներ, ինքնիրեն արտասանութիւններ կ'ընէր, որոնցմէ միայն երբեմն լսելի կ'ըլլացին. «Այս, ոչ, պիտի ըլլամ, պիտի երթամ, ևս եմ մեծը այս հաստատութեան» բառերը:

Բոլորը կը կարծէին թէ Պուռազնը ճառ կը պատրաստէ, թէ իր ճառերուն համար երբեք նախապատրաստութիւններ չեր ունենար: Բառերը անոր բերնէն ինքնաբուզին անկարգապահն կը խուժէն գուրս: Օրինակներ կը բերէր հին բարէն, նոր գարէն, միշտ արհամարհելով միջին գարը, կաթովիկ եկեղեցին, օրինակներ կը բերէր ապագայ դարէն: Գուռար էր գուշակել թէ Պուռազնի մաքին մէջ ինչպէս կը ներկայանար իր այնքան յեղյեղուած Ապագայ Դարը:

Մշակոցթի, վիլխասփայութեան, գիտութեան, գեղարվեստի, (կը ճառէր այս բոլորի մասին) ի՞նչ ձեւն էր, որ կը պատկերանար իր ահաւոր երեւակայութեան առջեւ, և արդեօք կը հասկնա՞ր Ապագայ Դար բացարութիւնը, որովհետեւ ճառերուն մէջ շատ անգամներ ունկնդիրները տպաշ կը լսէին այսպիսի խօսքեր. «Ապագայ հակայ և երկար դարերն անդամ կը վկայեն իմ գաղափարներուս ծգութիւնը»: Այս խօսքերով ուռած ճառերը իրենց վերջաւորութեան մէջ չէին արժանանար հիմնութափութեան, ամենագոյզն քննադատութեան, որովհետեւ անիկա իր պատրաստուած էին զգայացունց աղաղակներով, կիմկերունեան շարժումներով և անսահման ոգեւորութեամբ: Ոչ ոք կրնար անոր յաղթել րօլումիք մէջ, որովհետեւ անիկա իր պատրաստաններուն մէջ տեսակէտի հաւեւողականութիւն չեր հասապնդեր, անտարբեր կը գտնուէր արամարանութեան, այլ մէկը միւսին ետեւ կը շարեր առանձինը և թուականներ, նախ քան գիրիստոսը, չեր տարբերէր

Քրիստոնէ եռքի եղելութեանց հետ, իր համար ու և է ինչ միւնոյնն էր, միայն թէ արտահանութիւնը ըլլար բարձրակոչ, հուսորական ձեւերով և շփոթեցուցիչ։ Անիկա կրնար շփոթեցնել դժմացինը, բայց նախապատճառական խորամանկութեամբ չէր։ Եթէ ամէնքն համակերպէին, որ Պուռագոնի ձաւին մէջ արամարանութիւն չի կար, պատմական փառաերր խկզաթիւրուած էին, բայց և այնպէս ձաւը ինքնին՝ պերճախոսական էր, անիկա յաջողած կ'ըւլար իր բուն նովատակին մէջ, — հուսորութիւն։

Գոլէճի զարդնթացքին, ինչպէս ըսինք, հորիզոններու և թորիչքներու մեծ փոփոխութիւններ կատարաւեցան։ Զկար Պուռագոնի հայրիկը, որ անոր ներշնչէր սուրի և հրացանի սիրագործութիւններ։ Ամէն որ, ամէն ժամ քրիստոնէական ողիով կառուցուած գոլէճի միավոնաբական էշխանութիւնը աղօթքներով, Ս. Հոգիի և Որդի Մարդոյ առասպեկներով կր զաստիաբակէր ուսանողութիւնը։ Բնականորէն Պուռագոնի մատագ և դժայտն հոգին խորապէս աղդուէր։ «Սուրբ քաշողը սուրով կը հասուցուի», «մէկ երեխադ որ զարնեն միւսը դարձուր» և այլն, նշանաբաններով լեցուցած էին Պուռագոնի երեւեկայութիւնը։

«Սուրբ քաշողը սուրով պիտի հասուցուի», երեար առեն չըմբռնեց Պուռագոնը։ Սուրբ իր համար կը ներկայանար տակաւին գգուամնքի և կաթողին սիրոյ առարկայ, բայց որովհետեւ շատ էին խօսած այդպէս և Տօքթէօր կամ Փրօֆէսօր ըլլալու երազը զինք օօրած էր, եկած էր այն հաստատ համոզումին, որ պէտք էր թողուլ այդ բաները, որպէսզի կարենար համնիլ այդ նշանաբանը քարոզողներու դիրքին և մեծ փայելյութեան։

